

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ՀԵՐԱՅԻ ՏՈՒՐՅԱԿ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ
ԵՎ ՉԱՐԳԼՕՄԱԿ ՀԵՌԱԿԱՐՄԵՐԸ
ARMENIAN STUDIES TODAY
AND DEVELOPMENT
PERSPECTIVES

Միջազգային համաժողով
Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003 թ.
International Congress
Yerevan, September 15-20, 2003



Ձեկուցումների ժողովածու
Collection of papers



ՀԱՅ ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԵՐՈՒՄՆԵՐԸ, ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Սարգիս Հարությունյան
Հայաստան

1. Հայ բանագիտությունը սկզբնավորվել է 19-րդ դարի կեսերին՝ միջնադարից գրավոր ավանդված հին բանահյուսական հուշարձանների հետազոտությամբ (Մ. Էմին, Հով. Գաթրոճյան, Ստ. Պալասանյան): Նույն ժամանակներից են սկիզբ առնում կենդանի գոյատևող բանահյուսական նյութերի գրառումներն ու հրապարակումները, իսկ 1870-ականներից սկսած, Գ. Սրվանձտյանցի «Սասնա ծռեր» հերոսավեպի անդրանիկ պատումի հայտնաբերմամբ և բանահյուսական-ազգագրական ժողովածուների հրատարակությամբ բուռն շարժում է առաջ գալիս բանահյուսական երկերի հավաքման, հրապարակման և հետազոտման ուղղությամբ: Հիմնադրվում են մասնագիտական պարբերականներ («Ազգագրական հանդես», «Բյուրակն» շաբաթաթերթ, «Էմինյան ազգագրական ժողովածու»), որոնց էջերում տպագրվում են բանահյուսական-ազգագրական հարուստ նյութեր և ուսումնասիրություններ: 1915-1916 թթ. Ե. Լալայանի կողմից՝ առաջինը հայոց մեջ, կազմակերպվում է բանահավաքչական արշավախումբ, որն Անդրկովկասում ապաստանած արևմտահայ գաղթականներից գրառում է խիստ արժեքավոր ու մեծաքանակ բանահյուսական-ազգագրական նյութեր:

2. Հայ դասական բանագիտական միտքը սկիզբ է առնում 19-րդ դարի վերջերին և 20-րդի սկզբներին՝ Մ. Աբեղյանի հայ հին առասպելների, «Սասնա ծռեր» հերոսավեպի, ժողովրդական հավատալիքների և երգերի գիտական հետազոտություններով, որոնք 1920-40-ական թթ. ընդլայնվում և հարստանում են նոր արգասիքներով:

3. Խորհրդային շրջանում բանագիտությունը, այլ գիտությունների նման, դառնում է պետական հոգածության առարկա, կենտրոնանում Հայաստանի անդրանիկ գիտական հաստատություններում, իսկ 1944-ին, երբ կազմակերպվում է Հանրապետության Գիտությունների ակադեմիան՝ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում: 1960-ից այն կենտրոնանում է հիմնականում հնագիտության և ազգագրության նորակազմ ինստիտուտում:

Հայ բանագիտությունը զարգանում է մի քանի հիմնական ուղղություններով:

1. Առաջին կարևոր ուղղությունը **բանահավաքչությունն է**, որը տարերայնորեն սկզբնավորվելով 19-րդ դարի կեսերին՝ հետագայում Գ. Սրվանձտյանցի, Ե. Լալայանի և այլոց ջանքերով բուռն զարգացում է ապրում, իսկ խորհրդային շրջանում, պարբերաբար կազմակերպվող գիտարշավների շնորհիվ, դրվում է կազմակերպական կայուն հիմքերի վրա: Կուտակվում է բանահյուսական վիթխարի նյութ, որի հիման վրա 1920-ական թթ. ձևավորվում է **բանահյուսական հարուստ արխիվը**, որն սկզբից տնօրինվում է Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի, հետագայում Արմ-

Ֆանի և գրականության ինստիտուտի կողմից, իսկ 1960 թվականից ի վեր կենտրոնանում է հնագիտության և ազգագրության ինստիտուտում, տարեցտարի անհատական ու արշավախմբային գրառումներով համալրվում նորանոր նյութերով և 1970-ական թթ. ենթարկվում արձատական մշակման, դառնալով փաստագրական կայուն բազա բանագիտական հետազոտությունների համար:

2. Երկրորդ ուղղությունը **բանահյուսական տեքստաբանությունն է** (բնագրագիտություն), որն իրականացվում է երեք մակարդակով.

ա) առանձին ժանրերի բանահյուսական համահավաք բնագրերի գիտական հրատարակությունների տեսքով,

բ) ազգագրական առանձին շրջաններից գրառված տեղական բանահյուսական ժողովածուների տեսքով,

գ) բանահյուսական առանձին ժանրերի, տիպերի, սյուժեների, մոտիվների տեքստաբանական վերլուծության և համապատասխան համաբարբառների ու համացույցների ստեղծման տեսքով:

2ա. Բանահյուսական առանձին ժանրերի գիտական համահավաք բնագրերի հրատարակման ավանդույթը մեզանում սկզբնավորվում է 1930-ական թթ. կեսերից, ի դեմս Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի կազմած «Սասնա ծռեր» հերոսավեպի եռագիրք հրատարակության (1935-1951 թթ.): Այդ ավանդույթը շարունակվում է հետագայում և բովանդակավորվում նորանոր արդյունքներով: 1937-ին Ա. Ղանալանյանը հրատարակում է «Հայ շինականի աշխատանքի երգերը», 1951-ին «Հայկական առածանի»-ն, 1969-ին Հայոց ավանդական գրույցների համահավաք բնագիրը՝ «Ավանդապատում» խորագրով, որոնցով ի մի են բերվում և գիտական հասարակայնությանը ներկայացվում հիշյալ երեք կարևոր ժանրերի համահավաք բնագրերը:

1940-ին ակադ. Մ. Աբեղյանը հրատարակում է հայ քնարական բանահյուսության երկու ծավալուն ժողովածուներ. մեկը ժողովրդական խաղիկների համահավաք բնագրերն են, մյուսը՝ հին գուսանական երգերի՝ հայրենների և անտունիների:

1956-ին Աս. Մնացականյանը տպագրում է հայ միջնադարյան ժողովրդական երգերի գիտական համահավաքը, իսկ 1961-ին Մ. Սկրտչյանը՝ պանդխտության հայ ժողովրդական երգերի համահավաք ժողովածուն:

1958-ին սկիզբ է դրվում հայկական հեքիաթների համահավաք բնագրերի բազմահատոր հրատարակությանը Արտ. Նազինյանի ընդհանուր խմբագրությամբ, որից ցարդ լույս է տեսել 14 հատոր, իսկ մնացած վեց հատորները, որոնք վաղուց են պատրաստ, կտպագրվեն առաջիկայում: 1965-ին Ս. Հարությունյանը հրատարակում է հայկական հանելուկների բնագրերի ծավալուն համահավաքը, 1970-ին Ռ. Գրիգորյանը տպագրում է հայ օրորոցային և մանկական երգերի, իսկ 1989-ին Ալ. Ղազիյանը հրատարակում է հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգերի համահավաք բնագրերը: 1968-ին Գր. Գրիգորյանը կազմել և հրատարակել է հայ ժողովի երգերի համահավաք բնագրերը, իսկ 1998-ին հետմահու տպագրվեց Աս. Մնացականյանի միջնադարյան հայրենների համահավաք ժառանգությունը: Կազմված և հրատարակության են պատրաստ Ս. Հարությունյանի հայ հմայական և ժողովրդական աղոթքների և Ալ. Ղազիյանի հայ երգիծական և զվարճախոսական գրույցների գիտական համահավաք բնագրերը:

Տեքստաբանական աշխատանքների այս ենթաբաժնում հարկ է հիշատակել նաև մի կարևոր իրադարձություն, որ տեղի ունեցավ 1970-ական թթ. և խիստ արգասավոր եղավ հայ բանագիտության համար: 1960-ական թթ. վերջերին բանագետ Գր. Գրիգորյանն իր անձնական նախաձեռնությամբ Հայաստանի մի քանի շրջաններից իր որդու՝ Վ. Գրիգորյանի, հետ միասին գրառել էին «Սասնա ծռերի» 9 նոր պատումներ, որոնք հրատարակվեցին 1977 թ. «Սասունցի Դավիթ» խորագրով: 1971-ին հնագի-

տության և ազգագրության ինստիտուտը, հերոսավեպի հայտնաբերման 100-ամյակի կապակցությամբ Ս. Հարությունյանի ղեկավարությամբ և Ա. Սահակյանի գործուն մասնակցությամբ կազմակերպեց վեպի նոր պատումների հայտնաբերման և գրառման նպատակային արշավախումբ, որը երեք տարվա ջանադիր աշխատանքով Հայաստանի տարբեր շրջաններից գրառեց վեպի տարբեր որակ ու արժեք ներկայացնող 81 պատում (մեկը քրդերեն): Դրանց մի ընտիր մասը (շուրջ 25 պատում) գրառողները հրատարակեցին երկու հատորով (1979 և 1999 թթ.) և դրանք դարձրին Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի տակավին 1930-ական թթ. հիմնադրած «Սասնա ծռեր» պատումների գիտական հրատարակության հաջորդական 3-րդ և 4-րդ հատորները: Իսկ բանագետ Ռ. Գրիգորյանը նույն տասնամյակին այժմյան Գեղարքունիքի մարզից գրառել էր հերոսավեպի ևս 10 նոր պատում, որոնք տպագրվեցին 2000 թ. «Սասնա ծռեր» խորագրով:

Այդպիսով, այդ նախածեղությունների շնորհիվ մեր ազգային վեպի ժառանգությունը հարստացավ շուրջ 100 նորագույն տարբերակներով, որոնք տեքստաբանական կարևոր բազա են հանդիսանում վեպի արդի և գալիք հետազոտությունների համար:

2բ. Երկրորդ ենթաուղղությունը Հայաստանի և Սփյուռքի ազգագրական առանձին շրջանների տեղական բանահյուսական ժողովածուների հրատարակությունն է: Արդեն հրատարակվել են շուրջ մեկուկես տասնյակ գրքեր, որոնցից հիշատակելի են Լեռնային Ղարաբաղի (Մ. Գրիգորյան-Սպանդարյան), Նոր Նախիջևանի (Խ. Փորքշեյան, Մ. Լյուլեճյան), Հարքի (Բենսե), Նոր Բայազետի (Գ. Միքայելյան), Ղզլարի (Գ. Գևորգյան), Գեղարքունիքի (Ռ. Գրիգորյան), Արցախի (Ալ. Ղազիյան), Մուսա լեռան, Կիլիկիայի, Կոստանդնուպոլսի (Վ. Սվազյան), Թալինի (Ռ. Խաչատրյան), Տավուշի (Է. Խենյան), Լոռու (Թ. Գևորգյան), Բաքվի (Ալ. Ղազիյան, Սվ. Վարդանյան) արժեքավոր ժողովածուները: Սրանք բոլորն էլ կարևոր սկզբնաղբյուրներ են հայոց բանահյուսության արդի վիճակի ճանաչման և զնահատման համար, քանզի բոլոր նյութերը հավաքված և գրառված են անձամբ այդ բանագետ հեղինակների ձեռքով:

2գ. Բանահյուսական տեքստաբանության երրորդ ենթաճյուղը, ինչպես վերևում նշվեց, առանձին ժանրերի, տիպերի, սյուժեների, մոտիվների բանագիտական քննությունն է և դրա հիման վրա համապատասխան համաբարբառների և համացույցների կազմման աշխատանքները: Այդ ուղղությամբ կոլեկտիվ ուժերով ցարդ կազմվել են բանահյուսական արխիվում պահվող 16 հազար երգ-խաղիկների մոտիվների կատալոգը և դրա հիման վրա ստեղծվել են այդ երգերի տարբերակների համահավաք բնագրերը: Նույն կոլեկտիվ ուժերով (ղեկավար՝ Ս. Հարությունյան) կազմվել է ժող. խաղիկների ողջ ժառանգության մոտիվային **համաբարբառը**, որը ներկայումս ենթարկվում է համակարգչային մշակման:

Բանագետների մեկ այլ խումբ (ղեկավար՝ Ալ. Ղազիյան) այժմ զբաղվում է հայկական հեքիաթների սյուժեների տիպաբանական նշացանկի կազմման աշխատանքով, միջազգային սյուժեների համեմատությամբ, որը կարևոր ներդրում կլինի մեր հեքիաթների տեքստաբանական հետազոտության և դրանց միջազգային ճանաչման ասպարեզում:

3. Երրորդ կարևոր ուղղությունը հայ բանահյուսության առանձին ժանրերի, ժանրային համակարգերի, բանահյուսական հուշարձանների, բանագիտական տարբեր խնդիրների **տեսական ուսումնասիրությունն է**:

Ցարդ հետազոտվել են, այն էլ տարբեր մեծագրությունների կամ մեծագրական ակնարկների տեսքով հայ վիպական բանահյուսության պատմա-տիպաբանական զարգացման հիմնական փուլերը (Մ. Աբեղյան), ժողովրդական վիպերգերը (Մ. Աբեղյան, Գր. Գրիգորյան), «Սասնա ծռեր» հերոսավեպը (Մ. Աբեղյան, Կ. Մելիք-Օհան-

ջանյան, Գր. Գրիգորյան, Ս. Հարությունյան, Ա. Սահակյան և այլք), հայ առասպելաբանությունը (Մ. Աբեղյան, Գր. Ղափանցյան, Նիկ. Աղոնց, Ալ. Մատիկյան, Ս. Հարությունյան, Արմ. Պետրոսյան, Է. Պետրոսյան և այլք), ժողովրդական քնարական երգերը՝ խաղիկները, հայրեններն ու անտունիները (Մ. Աբեղյան, Աս. Մնացականյան), մանկական երգերն ու օրորոցայինները (Ռ. Գրիգորյան), աշխատանքային երգերը (Ա. Ղանալանյան), սգերգերը (Երազ. Հարությունյան), ժողովրդական ծիսական երգերն ու պոետիկան (Ռ. Խաչատրյան), ավանդություններն ու ավանդական գրույցները (Ա. Ղանալանյան), հրաշապատում հեքիաթները (Սյուզ. Գուլակյան), միջնադարյան գրույցները (Արմ. Արապյան), ժողովրդական հուշապատումները (Վ. Սվազյան), երգիծական գրույցներն ու զվարճապատումները (Ալ. Ղազիյան), առածներն ու ասացվածքները (Ա. Ղանալանյան), ժող. հանելուկները (Ս. Հարությունյան), միջնադարյան հանելուկները (Աս. Մնացականյան), հմայական բանահյուսությունը՝ իր տարատեսակներով (անեծք, օրհնանք, երդում, աղոթք) (Ս. Հարությունյան), ժող. հավատալիքները (Մ. Աբեղյան, Ս. Հարությունյան) և այլն:

Հարկ է նկատել, որ այս ուղղությամբ կատարվող բանագիտական ուսումնասիրությունները վերջին երեսնամյակում առավել ընդլայնել և խորացրել են իրենց սահմանները թե՛ համեմատական նյութերի ընդգրկման և թե՛ հիմնավոր քննությունների առումով: Այս տեսակետից Ս. Հարությունյանի հայկական անեծք-օրհնանքներին և առասպելաբանությանը նվիրված մեծագրությունները հիմնված են փաստական հարուստ նյութի և այլ ավանդական ժանրերի նորոգ լուսաբանության վրա: Արժեքավոր բանասիրական քննությունների արդյունք են Ա. Սահակյանի «Սասնա ծռերի» պատմության քննական համեմատություն» մեծագրությունը (1975), Արմ. Պետրոսյանի երեք մեծագրությունները՝ նվիրված Արամի առասպելներին, ինչպես նաև հայկական էպոսի հնդեվրոպական և հին մերձավորարևելյան ակունքներին՝ կատարված համեմատական լայն տեսադաշտի վրա, Ա. Եղիազարյանի «Սասնա ծռեր» էպոսի պոետիկան» մեծագրությունը (2000 թ.) և այլն:

Հայոց առասպելաբանության հարուստ նյութերը մեր մասնագետների շնորհիվ դուրս են եկել ազգային նեղ շրջանակներից և պատշաճ տեղ գրավել Մոսկվայում ռուսերեն հրատարակված «Աշխարհի ժողովուրդների առասպելները» երկհատոր հանրագիտարանում ու «Առասպելաբանական բառարանում», որոնցից քարգմանվել են եվրոպական այլ լեզուներով: Մոսկվայում ռուսերեն տպագրվում է Է. Պետրոսյանի հայոց առասպելներին ու ծեսերին նվիրված մեծագրությունը: Առհասարակ վերջին տարիների բանագիտական հետազոտությունները կատարվում են էթնոմշակութային լայն տեսադաշտի վրա:

4. Չորրորդ ուղղությունը **հայ բանագիտական մտքի պատմության** ուսումնասիրությունն է, որն առայժմ կատարվում է առանձին մեծագրությունների և մեծագրական ակնարկների տեսքով: Այդ ուղղությամբ ցարդ լույս են տեսել Ս. Հարությունյանի «Մանուկ Աբեղյան, կյանքն ու գործը» (1970), Վ. Սվազյանի «Սարգիս Հայկունի, կյանքն ու գործունեությունը» (1973), Սվ. Վարդանյանի «Տիգրան Նավասարդյանի ավանդը հայ բանագիտության մեջ» (1991), «Միքայել Մինասարյանց, կյանքն ու գործը» (2002) մեծագրությունները, Ա. Ղանալանյանի «Գարեգին Սրվանձտյանց» (1964), «Դրվագներ հայ բանագիտության պատմության» (1985) աշխատությունները, ինչպես նաև հայ տարբեր բանագետների կյանքին ու վաստակին նվիրված Ա. Ղանալանյանի և Ս. Հարությունյանի բազմաթիվ մեծագրական ակնարկները, որոնք բոլորն էլ պատշաճ հիմքեր են ծառայելու գալիքում հայ բանագիտության համակարգված գիտական պատմության շարադրման համար: Այստեղ հարկ է նաև հիշատակել անցյալի հայ անվանի բանագետների և բանահավաքների մեծ մասամբ տարբեր գրքերում ու պարբերականներում ցրված ժառանգության վերահրատարակությունները՝ կատարված հնագիտության և ազգագրության և գրա-

կանության ինստիտուտների կողմից: Դրանցից են Մ. Աբեղյանի երկերի ութհատորյակը, Գ. Սրվանձտյանցի երկերի երկհատորյակը, Երվ. Լալայանի երկերի բազմահատորյակը, որից ցարդ հրատարակվել է երկու հատոր, Բենսեի (Սահակ Մովսիսյան) գրառած նյութերի միհատորյակը և Քաջբերունու «Ճանապարհորդական ուղեգրություններ» մեծարժեք հատորը:

5. Հինգերորդ ուղղությունը **գրականության և բանահյուսության փոխառնչությունների** խնդրի հետազոտությունն է, որն սկզբնավորվեց խորհրդահայ բանագիտության մեջ հանձին Արամ Ղանալանյանի բազմաթիվ ուսումնասիրությունների, բոլորն էլ նվիրված 19-րդ դարի հայ անվանի դասականների (Աբովյան, Պռոշյան, Աղայան, Թումանյան, Իսահակյան, Պարոնյան, Նալբանդյան և այլք), ինչպես նաև 18-րդ դարի մեծ բանաստեղծ Սայաթ-Նովայի ստեղծագործությունների՝ բանահյուսության հետ ունեցած առնչությունների քննությանը: Իսկ բանագետ Արտ. Նազինյանը 1954-ին հրատարակեց մի մենագրություն՝ նվիրված խորհրդահայ գրականության և ժող. բանահյուսության փոխառնչությունների խնդրի հետազոտմանը:

Սրանք են ընդհանուր գծերով հայ բանագիտության ցարդ ձեռք բերած արդյունքների մոտավոր պատկերը, հետազոտական հիմնական ուղղություններն ու խնդիրները:

6. Հայ բանագիտության արդի խնդիրներից է ամենից առաջ առավել ծավալուն ու խորագնին աշխատանքներ տանել արդեն թվարկված ուղղություններով, որոնք դարձել են կայուն ու հուսալի ավանդներ, միաժամանակ առաջադրել նոր թեմաներ, խնդիրներ, կատարման եղանակներ:

Արդեն սկսվել է ցարդ գրեթե չուսումնասիրված հայ երգիծական զրույցների, ծիսական բանահյուսության, հեքիաթների, ժողովրդական հավատալիքների բանագիտական հետազոտումը: Առայժմ չուսումնասիրված են մնում ժողովրդական առակները և դրանց հարաբերության խնդիրը միջնադարյան գրավոր առակների հետ:

Անհրաժեշտ է արդի բանագիտական հետազոտությունների մեջ հիմնական շեշտը դնել բանահյուսական երկերի կիրառական ֆունկցիաների և բանասիրական - տիպաբանական հատկանիշների քննության վրա, որով նախ կբացահայտվեն ժողովրդական մշակույթի մյուս բնագավառների հետ բանահյուսության ունեցած հարաբերությունները և ապա դրանց գեղարվեստական դրսևորման ձևերն ու եղանակները: Միաժամանակ պետք է զարկ տալ հայ բանահյուսական հուշարձանների **համեմատական** ուսումնասիրությանը, դրանց **այլալեզու թարգմանություններին**, նպաստել արդեն ռուսերեն թարգմանված վիպական հուշարձանների շուտափույթ հրատարակությանը, ինչպես նաև հեքիաթների բազմահատոր համահավաքի մնացած հատորների և հայ հմայական և ժողովրդական աղոթքների գիտական համահավաքի տպագրությանը:

Եղած փաստական նախադրյալների հիմքի վրա այժմյանից նախապատրաստել և մոտիկ ապագայում իրագործել հայ **բանագիտության գիտական պատմության** շարադրումը, հայ բանահյուսության ամբողջական **մատենագիտության** կազմումը, աստիճանաբար իրականացնել հայ բանահյուսության **վիպական ու քնարական** մոտիվների համացույց բանկ - շտեմարանի ստեղծումը, միաժամանակ ինտերնետային կապի մեջ ներդնել հայ բանահյուսության ամբողջական ժառանգությունը:

Բանագիտական բոլոր կարգի մշակումների և ուսումնասիրությունների հիմքում լայնորեն ներդնել համակարգչային տեխնիկական և արդի այլ տեխնիկական միջոցների կիրառական հնարավորությունները:

Միաժամանակ բանագիտական հետազոտությունների մեջ պետք է ներգրավել սփյուռքահայ համայնքները, առաջին հերթին սփյուռքահայ բարերարների համագործակցությամբ տարբեր հայաշատ երկրներում կազմակերպել բանահյուսական

նյութերի զանգվածային գրառումներ և աստիճանաբար իրագործել դրանց հրատարակությունը: Այդ ուղղությամբ զգալի աշխատանք է կատարել դ-ր Վ. Ավագյանը, սակայն դա դեռ քիչ է. կազմակերպված կայուն հիմքերի վրա դնել բանահավաքչության գործը Սփյուռքում և այդ աշխատանքների մեջ ներգրավել սփյուռքահայ ներկայացուցիչներին:

Անհրաժեշտ է եղած կապերն ամրապնդել միջազգային բանագիտական կենտրոնների, մասնավորապես Ֆինլանդիայի բանագետների համադաշնակցային ընկերակցության (FFC) հետ, ուր արդի մեթոդներով ու տեխնոլոգիական միջոցներով իրագործվում են բանագիտական - ազգագրական լուրջ հետազոտություններ: Այդ կենտրոնից պարբերաբար ստացվում են տպագիր տեղեկատվություններ, բազմաթիվ հրավերներ՝ մասնակցելու այնտեղ կազմակերպվող գիտահետազոտական միջոցառումներին (ամառային սեմինարներ, գիտական համաժողովներ, խորհրդակցություններ և այլն), որոնց, սակայն, ֆինանսական միջոցների բացակայության պատճառով Հայաստանը չի կարողանում մասնակցել: Նյութական միջոցների բացակայության այս պատճառով պետք է ամեն գնով հաղթահարել, որպեսզի հայ բանագիտությունը կարողանա այսօր համընթաց քայլել միջազգային գիտության արդի նվաճումներին զուգահեռ: